

կերպագրեց, ինչ որ կերակրված էր ու դեռ ինչ որ մեր հոգիներում ցանկություններն ու մեր ձգտումներն ու հորիզոնն անհունապես վեր են՝ անոնք քույր են ու քու մայրական սրտեղ կրկին, դու ինքդ ես այդ բոլորը: Եվ եթե կա մեր կյանքին գերազույն նպատակ մը, այդ քեզ հասնիլն է, քու մեջ թափվիլն է ու մայրական կուրծքիդ խոցոտված սրտերնիս սեղմելն է: Առանց քեզի միթե կարելի է նպատակ, դու ինքդ ես նպատակ՝ Մայր Հայրենիք:

Ա՛խ, օտար արևը չըրավ մեր կյանքը շուշան, սոսին ու վարդ այլ՝ սոսկ կակաշ մը նահատակվածներու ոսկրածածկ անապատին մեջ. և մենք՝ մեծ եղբունի զարհուրանքներն խելագարած, անմխիթար ու անկարելիք երբ ցրիվ եղանք անգութ դահիճի ձեռամբ չորս ծագը աշխարհի, լաց ու մեղմուռ քամիով, մեր այդ ծով ցավին ո՛վ գթաց, ո՛վ խղճաց: Ո՛չ որ իսկ դո՛ւ, դու լացի՛ր, մայր հայրենիք: Ա՛հ այդ լացդ, լացդ քեզ ցնցեց ու քաջարի զավակներդ ոտքի հանեց, կրկին կուրծք տալու մահ սիրող գազանին դեմ: Հավակացդ պայքարը

սուրբ էր ու վսեմ: «Ձի ինչ կա թանկագին քանզ մարդկային կյանք», ըսված հիշատակն իմաստությանը արձագանքեց քու քաջարի որդոց սրտից մեջ, և այդ արձագանքը հաղթանակն իսկ եղավ: Եվ այսօր այդ հերոս զավակներուդ հոգին հաղթանակի հպարտությամբ լեցված երբ արյան դաշտից տուն կդառնան, իրենց եղբայրասեր ու անձկալից աչքերը ուղղած դեպի մեզ, կանչում են ձեզ, հրավերն կուղղեն: Կանչմը որ մեր հոգիները կվերացնեն ու մեր կակաշ սիրտերը շուշանի կվերածեն՝ կյանքի խանդովը գեղուն: Մի՞թե կարելի է այլևս ձեզմե հեռի ապրիլ ու այլ տեղ բարիք փնտել, երբե՞ք: Եվ այս բանին գիտակից ու հավատալովոր հոգիքը մեր քեզ կփնտեն Մայր Հայրենիք, կուրծքը ալիքներուն տվող նավուն պես: Ամենի ալիքներ թող ծեծեն մեր կուրծքերը, փոթորիկն ու մահը թող սպառնան, պիտի շնորհակիլք մահվան սպառնալիքին՝ քաջ գիտնալով թե մահը՝ ապրիլն է առանց քեզի, մեր կենսատու Հայրենիք:

ՏԱՐՈՆՑԻ ՀՈՒՍԱԿ

(«Առաւօտ» փետրվ. 21 1946 թ.)

## ԼԵՎՈՆ ԲՋՆՈՒՆԻ

### ՏԱՐԵՔ ԻՆՁ ՏԱՐԵՔ ԵՐԿԻՐՆ ՀԱՅՐԵՆԻ

Հայրենի հողի կարոտն իմ հոգում,  
Ես մտառում եմ հեռու ափերում.  
Տարեք ինձ զմուլստ դաշտերը բերրի,  
Տարեք ինձ, տարեք երկիրն հայրենի:

Թող տեսնեմ ծփան արտերը ոսկի  
Լսեմ երգերը մարտի ու կոշի.

Նստեմ ես արծաթ ջրերի յափին  
Դիտեմ ձեր դյուբոզ մարտական երթին:

Ու նայեմ, նայեմ շաբեբին անվերջ.  
Ձեր սիրտը դեմ հիվանդ սրտիս մեջ,  
Որ ես էլ լինեմ ձեզ նման զինվոր,  
Որ ես էլ լինեմ ձեզ նման հերոս:

(«Լեռածնունդ» թիվ 240 1945 թ. Թեհրան)

### Ն Ե Ր Գ Ա Ղ Ք

Ներգաղթի հեռագրին հրամարակությունը մեր նախորդ թվին մեջ, ընդհանուր խանդավառություն ստեղծեց Պաղեստինի հայ գաղութին մեջ:

Յաֆայեն, Երուսաղեմեն և այլ շրջաններն զանազան գրություններ ստացանք, որոնցմով շատ մը ազգայիններ կուղեն իմանալ թե երբ պիտի սկսվի ներգաղթի արձանագրությունը:

Խանդավառությունը ընդհանուր է. առանց դավանանքի, դասակարգի և կուսակցական խտրության:

Ներգաղթող հայերու Ընդունման և Տեղա-

վորման Կոմիտեին կողմն ուղարկած հարցարանը պարզ է ինքնին:

Մայր Հայրենիքի կառավարությունը հարց չի դնել թե ներգաղթողը ի՞նչ կրոնքի կամ ի՞նչ կուսակցության կապականի և կամ հասարակական ի՞նչ դիրքի վրա կգտնվի ան. բավական է, որ հայրենասեր հայ մը ըլլա ներկայացողը:

Ազգահավաքումի կոչ մըն է, որ կուղեն Սովետական Հայաստանի Կառավարությունը աշխարհացրիվ բոլոր հայերուն անխտիր իսկ արտասահմանի հայությունը մեկ մարդու նման իր պատրաստակամությունը կը-